


ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

(ՏԱՂՈՒԱԾ)



ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԳԱՔԱՆԳԵՂԵԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Ա.

Ի՞նչ 2. տող 20. «Ձի թէպէտ եւ տեսանի-
ցեն զըռնութիւն սաստկութեան հողմակո-
ծեալ ալեացն տատանելոց՝ յերփն երփն զե-
րանգսն շրջեն ըստ մանկութեան ծփանացն
դիզազէզ յեղիղուկ փրփրացեալ զմիմեանց
կարգեալ զկնի տողիցին »: — Ուղղ. ըստ
մտերութեան կամ թագմութեան. նայելով ո՞րն
է աւելի մօտ հեղինակի մտքին: Եթէ սկիզբն
առնունք ալէկոծութեան, երբ սկսի հովը
փչել՝ նախ կ'ընտրուի է ծովի երեսը, ապա
մանր ալիքներ ձեւանալով է մեծանալով
հետզհետէ՝ « յերփն երփն զերանգսն փոփո-
խեն » ըստ մանրութեան կամ մեծութեան
ալեաց: Իսկ եթէ արդէն սկսած ալէկո-
ծութիւնն կամի պատկերել, այն ատեն
թագմութիւնն ալեացն իրարու հետեից կը
դիմեն դէպ ի ծովափը, շրջաշրջելով է զե-
րանգսն փոխելով:

Բ.

Ի՞նչ 5. տող 24. « Նոքա եւ զտենչալի
բժշկութեան արմատոց օգտակարութեան
բերեալ զպտուղս՝ յոսոցանէն »: — Ուղղ.
զպտուղս ուսոցանէն: Վաճառականները աշ-
խարհէ աշխարհ թափառելով՝ ոչ միայն
թանկագին վաճառք բերում են հայրենիք,
այլ և օգտակար գիտութիւններ, յորոց է
մին էր բժշկական արմատների օգտակա-
րութիւնը, որոնք օտար տեղից բերելով
իւրեանցայնոցն պիտի ուսոցանէին. — ան-

շուշտ անոնց կիրառութիւնը և օգտակա-
րութիւնը:

Պ.

Ի՞նչ 6. տող 3. « Նոքա եւ համարակարգ
երկայն ճանապարհաց »: — Ուղղ. համա-
րակարգ: « Համարակար » թերեւ նշանակէ
անձը՝ իրեւ պաշտօնեայ, իսկ « համարա-
կալք » որպէս յատուկ վաճառականներ
որոնք իրենց գնացած ճամբու երկայն ու
կարճ հաշիւը գիտեն: Բայց աւելի ներքին
միտքն է՝ համարակալք, այսինքն պատ-
մողներ իրանց ճանապարհորդութեան անց-
քերից:

Պ.

Ի՞նչ 11. տող 21. « Նոքա կեանք եւ
փրկութիւն այնոցիկ՝ որ մեղաւորքն են աղ-
քատացեալ »: — Ուղղ. « մեղաւորքն են աղ-
քատացեալ ». տես ստորեւ տող 26. « որ
մեղաւոր են մերկացեալ »:

Ս.

Ի՞նչ 14. տող 16. « Միայն լուս' զքեզ
յաղտոյ, եւ անդէն անթառամ եւ լուսաւոր
զգեստուն՝ առաւելագոյն եւ քան զանուշա-
հոտ շուշան ծաղիկն զքեզ յոսոցանէ »: —
Ուղղ. « ևս քան . . . զքեզ զգեցոցանէ »:
Արդարացած մեղաւորի շնորհաց պատմու-
մանը աւելի էս անուշահոտ և պայծառ է

քան զշուշանն վայրենի, որ և ոչ Սողոմոն իրա փառաց մէջ գրեցաւ իրրեւ զմի ի նոցանէ:

Ձ.

Էջ 15. տող 3. « Եւ վարժեալ հայրենի արուեստիւ հոռոմարէն և յունարէն ուսեալ զարութիւն, և ոչինչ կարի անտեղեակ լեալ ձեռնարկութեան նշանագրաց »: — Ուղղ. « հայերէն արուեստիւ »? Հոռոմայեցոյ կամ Յոյնի մը համար մեծ բան մի չէր վարժուիլ արուեստիւ. բայց մի հայի համար, որ պատահաբար գուցէ ծներ է կենսարիւ, զովելի է յոյժ որ վարժուած է թէ հայերէն արուեստին և թէ հոռոմարէն և յունարէն ուսած զարութիւն: Հոռոմ և Աթէնք վաղուց մոռացել էին նախնական նշանագրութեանց գործածութիւնը, եթէ նոտարական արուեստը ի նկատի չառնուցուի. իսկ մեր Հայաստան Մեսրոբէն առաջ ի գործածութեան էին նշանագրեր, որոց արուեստիւ վարժուած էր Ագաթանգեղոս, բոտ այնմ « ոչ ինչ կարի անտեղեակ լեալ ձեռնարկութեան նշանագրաց »: Այս նշանագրաց ոյժն և արուեստն յետոյ ուրեմն մի ուրիշ հայ հանճար պիտի կանոնաւորէր և ստեղծէր և վայելչագրութեան ձեւի մտցնէր. « Հոռոմայեցոյ կերպածեալ » զգիրն Մեսրոբայ սոսնսն պատուաւ: Ասով շատ մը հարցեր և տարակոյսներ չեն հարթուում հայկական գրոց գիտի շուրջը:

Ե.

Էջ 15. տող 10. « Որ քան զամենայն նախնիսն քաջ եկեալ զանցոյց արութեամբք »: — Ուղղ. քաջ եղեալ. արութեամբ անցնելու համար նախնեացմէն, հարկ է քաջ լինել, որ և արութեամբք ցոյց տուեց « ըմբշամարտ սկայազօր քաջութիւնս » գործելով:

Ա.

Էջ 16. տող 14. « Կամ վասն մահուանն քաջին խորովու թէ ուստի և կամ զհարգ հանգիստապատական »: Հ. Յ. Թորոսեան, 1897ին, Բագմամպիկ Ստրինոգրոսի պա-

տասխաններուն մէջ առաջարկեց « հանգիստն պատուական », « հանգստեան տապալս » և մանաւանդ « եւս դիտապատաւանկա » ընթերցմամբ ուղղագրել վերոյիշեալ բառը (էջ 271): Կարծեմ լաւագոյն է ուղղել. « զհարգ նեկեալ տապալստ անկա »: Ընթացք պատմութեանն ցուցանէ որ աղաւղեալ բառը ուրիշ կերպ չէ կարելի լինել: Մի դարձուածք որ ընտանի է դասական մատենագիրներին:

Պ.

Էջ 17. տող 19. « Որ ի մահ հասեալ մտեալ և կամօքն Աստուծոյ այսրէն դարձեալ »: — Ուղղ. մատենալ? Մահը կրնայ մտանել ուր ուրեք որ կամենայ. իսկ որ դատապարտուելու է՝ նա միայն կրնայ մատուցիլ. այստեղ Ս. Լուսաւորիչն մատուցեալ էր ի դատաստան մեռնելու խոր վիրապի մէջ:

Յ.

Էջ 18. տող 3. « Իսկ բարեացապարտն Տրդատ յանկարծակաւ կենացն ասպնջական ցանկալի ամենեցուն լինէր »: — Ուղղ. յանկարծանաւ, իմա զալստեամբ կուսանացն Հոփիսիմեանց, որ « իրրեւ լուսաւորք ծագեցին փարատել զմէզ խաւարի ի Հայաստան աշխարհէս »: Տրդատ ընդունելով քրիստոնէութիւն՝ արքայական իշխանութեամբն ապաւին և պաշտպան եղաւ ամենքի « յանկարծահաս կենաց » համար որ էր հաւատքն Գրիստոսիւ կորին եւս բառ առ բառ ունի այդ կտորը « յանկարծահաս » ձեւով, որ փարատէ ամէն տարակոյս:

ԺԱ.

Էջ 20. տող 1. « Արդ ելից ի մտաց երկվարն, և յարմարեցից զասպարէզն հանճարոյ, ուղղեցից զնպատակն խորհրդոյ և Թափ տաց ուշ բազկացս և ձգեցից ի կորովս զբլի մատանց »: — Ուղղ. յարդարեցից? ... ուժի թազկացո? Ասպարէզ եւլղղ ինքզինքը ցոյց տալու համար է. ուստի խաղ և ճարտարութիւն Թափած ժա-

մանակ տալի ի դէպ է ասել՝ յարդարել տեսարանը հանդիսատեսաց բաւականութեան համար, իսկ ասպարէզն ինքն ըստ ինքեան յարմարացուած է թոշկոտ երիվարների մրցութեան:

Ֆ.Ֆ.

Էջ 21. տող 17. «Կամ ո՞րպէս շինեցան եկեղեցիք ընդ ամենայն երկիրս Հայոց, և քակեցան ունայնութեան պաշտամունքն, այն որ ի սովորական մոլորական նախնեացն ընդվայրակոչուո՞ւ, գրթախաղաց քարանցն և փայտից յիմարութիւնք էին»։ — Ուղղ. գրթախաղաց: Ս. Գրիգոր մեհակները կործանելով, ջարդեց նաև արձանները, կոփածոյ քարերը, որոնք պաշտաման առարկաներ էին. այն քարերը և փայտերը դրուագեալ էին քանդակագործի գրչով:

Ֆ.Ֆ.

Էջ 22. տող 22. «Լցեալ մեծաբարե տաքեռունս»։ — Ուղղ. մեծաբեռն «զե. րիվարս տախտակագործացն» էջ 1:

Ֆ.Ֆ.

Էջ 29. տող 15. «Չարխտալփար վատնէին»։ արդեօք չարխտալփատ?

Ֆ.Ֆ.

Էջ 30. տող 8. «Ոսկեղէն և արծաթեղէն զարդուք, և վերջաւորս փողփողեալ»։ — Ուղղ. «զարդուք ի վերջաւորս»?

Ֆ.Ֆ.

Էջ 40. տող 6. «Գայր տալ մարտ պատերազմ ընդ իշխանին Յունաց»։ արդեօք «Պատերազմի»?

Ֆ.Ֆ.

Էջ 42. տող 15. «Նաեւ զհամբարապանսն և բազում իշխան յայնկոյս որմոյն ընկենոյր ի մէջ զօրացն»։ — Ուղղ. «Բազումս ի շանց»? Լիկիանէս զօրքերով կը հասնի քաղաքի մօտ. զոնք փակ են. իսկ արտաքոյ կան համբարանոցք որ

են խոտի զէզերը: Ձիերուն խոտ հարկաւոր է. բայց զէզերը դրուած են քարձք քաւարփների վրայ, մինչեւ «և ոչ ոք կարաց ձգել զձեռան իւր վասն տեղւոյն բարձրութեան»։ Բնական է որ պատերազմի հոտ առած քաղաքացիք խոտի զէզերուն պահպաններ զրել են մարդիկ, և սոքա իրանց համար աւելի ապահով պահապան արթուն և հաւատարիմ տարած կը լինին հետերնին (ոչ եթէ էջեր՝ այլ) շներ, որոնք առանց զօժարութեան կընային բարձրանալ մինչեւ «զուարափակ» քաղաքումի մէջ: Այնտեղի է «իշխան» ի գոյութիւնը և բարձրանալն հոն, ուր հազգին բանակի միջէն, «ոչ ոք կարաց ձգել զձեռն իւր վասն տեղւոյն բարձրութեան»։ Իսկ Տրդատի քաջութիւնը յայնմ է որ թէ՛ կը բարձրանայ և թէ՛ կը կոտի խոտի պահապաններուն դէմ, կ'ունցնի պարտուէն անդին կ'իջնայ և «հոսեր ընկենոյր բարդս բարդս» և խրճնեւու հետ նաեւ «զհամբարապանսն» և բազումս ի շանց, որոնք իրանց առամները կ'ուզէին փորձել Տրդատի վերայ:

Ֆ.Ֆ.

Էջ 43. տող 3. «Ապա կոց պատեաց... տ. 11. և կաց պատմեաց»։ — Ուղղ. «եկաց... եկաց պատմեաց»?

Ֆ.Ֆ.

Էջ 56. տող 14. «Խօսել սկսաւ Թագաւորն և ասէ... զհաստատածն բանիցդ»։ — Ուղղ. «Թագաւորն և ասէ... զհաստատածն բանիցդ»։ Այսինքն կտոր կտոր շինած և սովորած բերանացի առասպելներ «զոր յողեալ և ուսեալդ ես» ասէ Տրդատ:

Խ.

Էջ 58. տող 16. «Եւ ընդ տեղակալ կացեր զու բեռամբն հանդերձ»։ — Ուղղ. «ընդ տեղակալ»?

Խ.Պ.

Էջ 60. տող 26. «Որ կարողն է կախել նոցա բեռինս ծանրութեան»։ — Ուղղ. կապել. ըստ այնմ «կապեն բեռինս

ծանունն » և այլն, Նոյն իսկ այժմու ժո-
ղովրդի բերանը՝ բնու կայսիլ՝ բնոր բռնել
կը նշանակէ, բառնայ և կրել, Տրդատ չէր
հասկանար անշուշտ կշիռքի պէս կախել
բռնեմը Գրիգորի երկու կողմէն, եւս ա-
ռանել որ խօսողն ինքն Գրիգորն է և ան-
շուշտ ըստ մտաց անտարանին է, « կա-
պեն բռնին ծանունն և դժուարակիրս »:

ԹԹ.

Էջ 69. տող 3. « Որոյ ո՛չ գուցեն բանը
յանդիմանութեան ի բերան իւրում »: ՃՐՀ-
դագոյն թուի ի բերանի իւրում ?

ԹՊ.

Էջ 87. տող 12. « Եւ ետ հրաման բե-
րել կոճեղս փայտից, և առնել ըստ ուրքի
խոստաց ոտից նորա »: — Ուղղ. կոստաց?
« Կոստ » է այն կէր հաստ ապարանջանի
ձեւով երկաթը՝ զոր ձիանուռ ոտքը կը զար-
նեն գողերու ահի համար, « քիսա » և եր-
բեմն կոստակներ կը կոչեն պարզապէս :
Ուստի թուի որ Գրիգորի ոտաց կոճը սխմե-
լու համար այդ կոստերի նման երկաթներ
զարկած են:

ԹՊ.

Էջ 95. տող 11. « Զի եթէ վաղ եթէ
անագան՝ սակայն քակտի հնացեալ մար-
մինն. զի եկեացէ ճարտարապետն, գտեալ
զորդիս մարդկան՝ միւս անգամ նորոգեա-
ցէ »: — Ուղղ. « զոգիս մարդկան »: Դի-
տուի շարունակութիւնը « Նորոգէ, զար-
դարէ կեցուցանէ զնոյն ոգիս նովին մար-
մնովն »:

ԹԾ.

Էջ 116. տող 21. « Զի զանձինս իւ-
րեանց սրբութեամբ պահեսցեն յայսմիկ
հողաթաւալ, աղարթաւ, մեղանչական,
անօրէն դիւակամ խառն ի մարդկանէ »:
— Ուղղ. « տղաթաթաւ . . . դիւախառն
ի մարդկանէ »: Աղաթաթաւ մարմին պահի
յապականութենէ, անոր համար երեխան
ծնանելու պէս արեւելք աղ կը ցանեն վրան.
Իսկ մարմին տղմարարա՞՛ երբ մեղօք վա-

րի: « Դիւակամ խառն ի մարդկանէ » ի-
մաստ չունի. իսկ դիւախառն՝ նշանակում
է դիւական խառնագնաց վարք ունեցող
հմմտ, և էջ 118. տող 3:

Հ. ԳԱՐՔԻԵԼ ՆԱԶԱԳԵՏՆԱՆ

Շարայարեղի

ԴԻՑԱՐԱՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Մարտ. — Ջատիկ. — Աստղական Ոսկիմ Յկա-
րագիրը. — Մեհնաժժերու Յերսը:

Հռոմայեցւոց հնագոյն պատերազմի աս-
տուածը՝ Թէլե Բէլլոնէ (Bellone) դիցունին
էր, բայց շուտով տեղի կու տայ Մարսի
(Mars) որ պատերազմական աւելի ընդ-
հանուր և աւելի շեշտուած նկարագիր մը
կ'ունենայ: Մարսի բուն ձեւն է Մարտ որ
յերեւան կու գայ սեռականին (Martis,
մարտի) և անկից կազմուած բառերուն մէջ
(Martialis, մարտական): Արդ, կարծեմ
թէ պէտք է նոյնացնել մեր մարտ (պա-
տերազմ) բառը և Հռոմայեցւոց պատե-
րազմի աստուածը զոր կարծես կ'ուզէ
ակնարկել նաեւ Հայկազեանը (տես մարտ
բառը). և այս բանիս լեզուական ոչ մէկ
օրէնք չի հակառակիր: Այս նոյնացմամբ
Մարսի ստուգարանութիւնը կը պայծառա-
նայ. այսինքն թէ ի սկզբան բառ մըն էր՝
պատերազմի գաղափարը բացատրող. և
Հռոմայեցի, որոնց Պանթէոնը գաղափար-
ներու աստուածացուցումներով խոնուած
էր, ինչպէս իրենց սիրտերը, անփոյթ ե-
ղած չեն Մարսի մէջ աստուածացնելու
գաղափարը պատերազմին՝ զոր ամէն բանէ
աւելի կը սիրէին: Մարտ՝ կ'երեւի թէ շատ
հին բառ մըն է Հռոմայեցւոց լեզուին մէջ,
քանի որ միայն Մարսի անուան և անկից
սերած բառերուն մէջ մնացեր է:

Մեր մէջ ալ մարտը բարձրացնէ է աս-
տուածութեան: — Ապահովապէս ոչ՝ քա-
նի որ հայերը երբէք պատերազմասէր ժո-
ղովուրդ մը չեն եղած: